



## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ

### ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ - ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏՐՎՈՒՄ Է ՏՐՎՈՒՄ Է ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՆՀԱՏԻՆ

16-ՏԱՐԻՔԻՑ ՎԵՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ

ՀԱՆՑԱԿԻՑ ԿԱՄ ՈՃՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՄԵԾԱՀԱՍԱԿԻ ՀԵՏ

ՔՐԵԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ 706-73 ՀՈՂՎԱԾԻ ՀԱՄԱԶԱՅՆ ԽԱԽՏՈՒՄ

**Ստորև բերված տեղեկատվությունը ձեզ պետք է տրվի ձեր հասկանալի լեզվով:**

**Ճնողական լիազորություններ ունեցող անձինք կստանան նույն տեղեկատվությունը, բացի, եթե դա չի հակասում ձեր հիմնական շահերին և կամ եթե դա չի խանգարում ընթացակարգին:**

**Դուք կարող եք պահել այս փաստաթուղթը ոստիկանական կալանքի ընթացքում ձեր մոտ:**

Դուք տեղեկացված եք, որ գտնվում եք ոստիկանության կալանքում, քանզի ձեր դեմ գոյություն ունի մեկ կամ մի քանի հիմնավոր պատճառ կասկածելու, որ դուք հանցակից եք կամ ոճրի մասնակից մեծահասակի հետ, համապատասխան ոճրագործության և կամ կազմակերպված հանցագործության կարգի, որը պատժվում է ազատազրկմամբ:

Դուք իրավունք ունեք իմանալու ձեր հանցագործության որակավորումը, ամսաթվը, ենթադրյալ հանցագործության և կատարման վայրի մասին տեղեկություններ, որի մեջ դուք ներգրավված եք, ինչպես նաև իրավունք ունեք տեղեկություններ իմանալու ոստիկանությունում ձեր բերման ենթարկվելու պատճառների մասին:

Դուք պետք է լսումներ անցկացնեք կատարված դեպքերի մասին, ձեր կալանքի առաջիկա 24 ժամվա ընթացքում:

Այնուհետև, դատախազը (le procureur), կամ հետաքննող և կամ երեխաների դատավորը (le juge d'instruction ou des enfants) կարող են որոշել, որ կալանքը երկարաձգվի ևս 24 ժամով: Դուք կա՛մ կներկայանաք դատավորի առաջ և կա՛մ տեսաժողով (visioconférence) կ'անցկացնեք դատավորի հետ:

Բացառությամբ կարգով և անհրաժեշտության դեպքում, եթե դատաքննությունը պահանջի, երկու հավելյալ երկարաձգում կարող է որոշվել ձեր դեմ, յուրաքանչյուրը 24 ժամով: Որոշումը կկայացնի կա՛մ ազատությունների ու կալանման դատավորը (le juge des libertés et de la détention), և կա՛մ հետաքննիչ դատավորը:

Այնուամենայնիվ, եթե իրականացվելիք հետաքննությունները արդարացնեն առաջին 48 ժամվա կալանքը, ազատությունների և կալանքի դատավորը՝ դատախազի կամ քննիչ դատավորի

պահանջով, կարող է որոշում կայացնել երկարաձգել կալանքը, միայն մեկ անգամ, 48 ժամվան համար:

Ոստիկանական կալանքի ավարտից հետո, հանրապետության դատախազի և կամ հետաքննիչ դատավորի որոշմամբ, կամ կներկայանաք դատավորի առաջ և կամ ազատ կարձակվեք: Առաջինի դեպքում դուք կներկայանաք դատավորի առաջ նույն օրը:

Եթե դատարանում գոյություն ունեն հատուկ կալանավայրեր և եթե ձեր կալանքի ժամանակետը չի ձգել 72 ժամը, դատավորի առաջ կներկայանաք հաջորդ օրը, ձեր կալանքի ավարտի վերջին 20 ժամվա ընթացքում:

Եթե ձեր ոստիկանական կալանքի ժամանակահատվածը անցել է 72 ժամը, այդ դեպքում դուք դատավորի առաջ կներկայանաք կալանքի ավարտի օրը:

## **Բացի այդ ձեզ տեղեկացվում է, թե դուք իրավունք ունեք**

### **Չգուշացնել որոշ մարդկանց ձեր կալանքի մասին**

- Ձեր ծնողները, խնամակալը, անձը կամ ծառայությունը որին դուք վստահված եք՝ պարտադիր կերպով կտեղեկացվեն ձեր կալանքի տակ լինելու մասին: Նրանց, նաև տեղեկություն կտրվի հանցագործության որակավորման, ամսաթվին, և հանցագործության կատարման վայրի մասին որի մեջ դուք ներգրավված եք:
- Դուք կարող եք նաև խնդրել, որ ձեր կալանքի տակ գտնվելու մասին հեռախոսով տեղեկություն փոխանակվի մեկ անձի: Դա կարող է լինել այն անձը, ում հետ դուք ապրում եք սովորաբար, կամ ձեր հարազատ ծնողներից որևէ մեկը, կամ ձեր եղբայրներից և քույրերից մեկը, կամ ձեր խնամակալը և կամ ձեր շահերը պաշտպանող անձը:
- Դուք կարող եք տեղեկացնել նաև ձեր գործատուին:
- Եթե դուք օտարերկրյա քաղաքացություն ունեք, կարող եք նաև տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական մարմիններին: Նրանք, ձեր կողմից օգնության դիմում ստանալուց հետո, բացի հարգելի հանգամանքներից, ամենաուշ, 3 ժամվա ընթացքում կմիջամտեն:

Հանրապետության դատախազը (հետաքննիչ դատավորը և կամ երեխաների դատավորը) կարող են որոշել, որ հետաքննությանը վերաբերվող տեղեկությունները չկիսվեն ոչ ոքի հետ, որպիսի գործին հետ կապված տեղեկությունները գաղտնի պահելն՝ ապացույցների հավաքագրման, պահպանման, կամ անհատի կյանքի սպառնացող վտանքի, ազատության, և անվտանգության նկատառումներով:

Եթե ձեր կալանքը երկարաձգելու հավանականություն կա, ձեր օրինական ներկայացուցիչներին հետաքննության վերաբերվող տեղեկությունների փոխանցումը չի կարող գերազանցել 24 ժամը, իսկ եթե ձեր կալանքը երկարաձգելու հավանականություն չկա, այդ չի կարող գերազանցել 12 ժամը:

Նույն պատճառներից ելնելով, եթե ձեր ոստիկանական կալանքը երկարաձգվել է 48 ժամից ավել՝ ազատությունների և կալանքի դատավորի (կամ հետաքննիչ դատավորի) որոշումով, ձեր ծնողներին և ձեր գործատուին տեղեկությունների փոխանցումը, կարող է նաև հետաձգվել:

### **Հաղորդակցվել մեկ անձի հետ**

Դուք կարող եք հաղորդակցվել գրավոր կերպով, հեռախոսով և կամ հանդիպում անցկացնել այն մարդկանցից մեկի հետ, ում տեղեկացրել էիք ձեր ոստիկանական կալանքի մասին: Սակայն, դատական ոստիկանության պաշտոնյան կարող է մերժել ձեր հայցը, եթե այն համատեղելի չէ ձեր ոստիկանությունում պահվելու պատճառների կամ այլ հանցագործություն թույլ տալու ռիսկի հետ: Դատական ոստիկանության պաշտոնյան ինք կը որոշի գրույցի պահը, պայմանները և տևողությունը, որը չի կարող գերազանցել 30 րոպեն: Հանդիպումները կ'անցկացվեն իր, կամ իր կողմից նշանակված անձի վերահսկողության ներքո:

Եթե ձեր ոստիկանական կալանքը երկարաձգվել է 48 ժամից ավել, դատական ոստիկանության պաշտոնյան չի կարող մերժել ձեր հայցը, հյուպատոսական մարմինների հետ հաղորդակցվելու համար:

### **Հետազոտվել բժշկի կողմից**

Դուք կարող եք խնդրել հետազոտվել բժշկի կողմից հենց ոստիկանական կալանքի սկզբից և կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքում: Եթե ձեր կալանքը երկարաձգվի 48 ժամից ավել, դուք պարտադիր կերպով կհետազոտվեք բժշկի կողմից, նաև ձեզ կտեղեկացվի, որ իրավունք ունեք կրկին դիմել բժշկական քննություն անցկացնելու:

Բժշկական քննություն անցկացնելու դիմումները կարող են արվել նաև ձեր ծնողների, խնամակալի և կամ վստահված անձի-ծառայության կողմից:

### **Հայտարարություններ կատարել, հարցերին պատասխանել կամ լռություն պահպանել**

Ոստիկանությունում ձեր ինքնությունը հայտնելուց հետո, լռումների ժամանակ դուք կարող եք:

- Հայտարարություններով հաղես գալ,
- Պատասխանել ձեզ տրված հարցերին,
- Լռու մնալ:

### **Օրինական ներկայացուցչի ուղեկցություն**

Եթե իրավասու մարմինը անհրաժեշտ համարի, լռումների կամ հարցաքննությունների ընթացքում, ձեզ կարող է ուղեկցել ծնողական լիազորություն ունեցող անձը: Անհրաժեշտության դեպքում, դուք կարող եք նաև նշանակել մեկ այլ չափահասի, որպեսզի ձեզ ուղեկցի: Չափահասը կարող է նշանակվել նաև դատավորի կողմից:

### **Փաստաբանի օգնություն**

#### **Պարտադիր է օգտվել փաստաբանի օգնությունից**

#### **Փաստաբանի ընտրություն**

Ոստիկանական կալանքի սկզբից, լռումների ցանկացած պահին ու կալանքը երկարաձգվելու դեպքում, դուք կարող եք խնդրել փաստաբանի օգնություն և ընտրել այն: Եթե դուք ի վիճակի չեք նշանակել փաստաբան և կամ ձեր նշանակած փաստաբանի հետ կապ հաստատել հնարավոր չէ, դատական ոստիկանության պաշտոնյան, կամ հանրապետության դատախազը (և կամ հետաքննության դատավորը և կամ երեխաների դատավորը) կդիմեն, որ ոստիկանատունը ինք փաստաբան նշանակի ձեզ համար:

Փաստաբանը կարող է նշանակվել, նաև ձեր ծնողների կողմից, կամ ձեր խնամակալի և կամ ձեզ վստահված անձի, կամ ծառայության կողմից:

#### **Փաստաբանի օգնության և միջամտության ժամկետը**

Փաստաբանը կարող է ձեզ հետ գրուցել 30 րոպե: Չրոյցի գաղտնիությունը երաշխավորված կլինի: Ոստիկանական կալանքի երկարաձգման դեպքում, կարող եք կրկին խնդրել հանդիպել ձեր փաստաբանի հետ:

Եթե խնդրեք Փաստաբանը կարող է ձեզ հետ մասնակցել լռումների, առճակատումների, գործի կառուցումն և ստուգումների նիստերին:

Այս պարագային, ձեր առաջին լռումը, եթե ինքնության հաստատման չի վերաբերում, այդ չի կարող սկսվել առանց ձեր փաստաբանի ներկայության, փաստաբան պահանջելու հայցը ներկայացնելու առաջին ռոպեից մինչև 2 ժամվա ժամկետի ավարտը:

Այնուամենայնիվ, ձեր առաջին նիստը կարող է անմիջապես սկսել, նույնիսկ ձեր փաստաբանի բացակայության դեպքում, հանրապետության դատախազի (հետաքննիչ դատավորի) թույլտվությամբ, եթե անհրաժեշտ լինի հետաքննությանը:

Եթե ձեր փաստաբանը ներկայանա լուսմներ կամ առերեսում վարելու ընթացքում, հետևաբար, կարող է լուսմը ընդհատվել համապատասխան ձեր խնդրանքին, որպեսզի կաողանաք գրուցել փաստափանին հետ: Հանրապետության դատախազը, հետաքննիչ դատավորը, կամ ազատությունների և կալանքի դատավորը կարող են, բացառության կարգով և հիմնավորված պատճառներից ելնելով, որոշում կայացնել հետաձգել ձեր փաստաբանի աջակցությունը նիստերին կամ առերեսումներին՝ առավելագույնը 12 ժամվով, որը կարելի է երկարաձգել միայն մեկ անգամ, եթե նախատեսված ազատագրկման ժամկետը առնվազն հինգ տարի է:

## **Թարգմանիչի օգնություն**

Եթե ֆրանսերեն չեք խոսում, կամ չեք հասկանում, դուք իրավունք ունեք, անվճար, թարգմանիչ օգնությունից օգտվելու նիստերի ընթացքում, ինչպես նաև փաստաբանի հետ հանդիպումների ընթացքում:

## **Դիմում ներկայացնել ոստիկանական կալանքը վերջ դնելու նպատակով**

Եթե, հանրապետության դատախազը կամ հետաքննիչ դատավորը և կամ ազատությունների և կալանքի դատավորը որոշում կայացնեն ոստիկանական կալանքը երկարաձգելու մասին, դուք կարող եք դիմել, որ կասեցվի ոստիկանական կալանքի:

## **Ծանոթանալ ձեր գործերի որոշակի փաստաթղթերի հետ**

Ձեր կամ ձեր փաստաբանի խնդրանքով, նախքան ձեր կալանքը երկարաձգելու որոշումը, կարող եք ծանոթանալ ձեր գործերին:

- Հարուցված գործի գրանցումին, կամ Կալանավորման ծանուցագրին,
- Ձեզ ստուգող բժշկի ատեստատին կամ ատեստատներին,
- Ձեր լուսմների արձանագրություններին:

## **Դիտարկումներ ներկայացնել դատախազին**

Ոստիկանական կալանքից հետո, եթե ցանկանում եք, մեկ տարվա ընթացքում, կարող եք ծանոթանալ ձեր գործերի ընթացքին և կամ դիտարկումներ ներկայացնել նամակով՝ ստացման հաստատումով նամակով (lettre recommandée avec demande d'avis de réception), հասցեագրված դատախազին և կամ ուղակի դիմում ներկայացնել դատաբանի քարտուղարին (greffe), որը դիմումի փոխարեն ձեզ կը հանձնի ստացման փաստաթուղթ:

## **Անձնական կյանքի պաշտպանության իրավունքը**

Ձեր ոստիկանական կալանքի ընթացքում անցկացված լուսմները կնկարահանվեն, բացի եթե տեխնիկապես հնարավոր չե այն: Արգելվում է, ցանկացած մարդու, այդ լուսմների ձայնագրությունները հեռարձակել:

Այդ ձայնագրությունները կարող են հեռարձակվել միմիայն դռնփակ նիստերի ժամանակ: Արգելվում է հրապարակել դատավարության արձանագրությունները, կամ գեկուցումները, կամ ցանկացած տվյալ, որը թույլ կտա ձեր ինքնությունը բացահայտել:

Déclaration des droits remise à une personne placée en garde à vue, mineur de plus de 16 ans, coauteur ou complice d'un majeur, ayant commis une infraction relevant de l'article 706-73 du code de procédure pénale.